Գլխավոր տեղեկություն	
Համար	N 311-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (12.03.2020-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2020.03.11/19(1574) Հոդ.248
Ընդունող մարմին	ՀՀ վարչապետ
Ընդունման ամսաթիվ	06.03.2020
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	06.03.2020
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	12.03.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2020 թվականի N 311-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ԵՎ ԶԻՆԱՆՇԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանության մասին» օրենքի 3.1-ին հոդվածի 2-րդ մասի՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ոստիկանության դրոշի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության դրոշի նկարագրությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության ոստիկանության զինանշանի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության ոստիկանության զինանշանի նկարագրությունը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

2020 թ. մարտի 6
Երևան

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2020 թ.
մարտի 6-ի N 311-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության դրոշը (այսուհետ՝ դրոշ) պատվի և

արժանապատվության, արիության և նվիրումի խորհրդանիշ է: Դրոշը ոստիկանության յուրաքանչյուր աշխատակցի սրբազան պարտքի հիշեցումն է՝ հայրենիքին անձնուրաց ծառայելու, յուրաքանչյուր մարդու կյանքը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը պաշտպանելու, հասարակական կարգը պահպանելու և հասարակական անվտանգությունն ապահովելու մասին:

2. Դրոշը Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը հանձնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ նրա կողմից լիազորված անձը:

3. Դրոշի հետ միասին հանձնվում է նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի ստորագրությամբ վկայագիր:

4. Դրոշը մշտապես պահվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում:

5. Դրոշի պահման, պահպանման և օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը:

6. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնակազմը պարտավոր է պահպանել և պաշտպանել դրոշը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2020 թ.
մարտի 6-ի N 311-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության դրոշը (այսուհետ՝ դրոշ)՝ համաձայն ձևի, բաղկացած է երկդեմ պաստառից և ծոպափնջերով քուղերից:

2. Դրոշի պաստառն ուղղանկյունաձև է, երկարությունը՝ 1450 մմ, լայնությունը՝ 1150 մմ:

3. Կարված է երկտակ մետաքսե մուգ բալագույն կտորից (կտորի գույնի համակարգչային հարաբերակցությունն է՝ M=100%, Y=20%, K=50%)՝ երեք կողմից երիզված ոսկեգույն ծոպերով:

4. Պաստառի երեսի կողմի վերին ձախ անկյունում պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ 500 մմ երկարությամբ և 400 մմ բարձրությամբ:

5. Պաստառի կենտրոնական մասում ոսկեգույն մետաքսաթելով ասեղնագործված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը, տառերի բարձրությունը 7 մմ է, լայնությունը՝ 5 մմ:

6. Պաստառի հակառակ կողմի կենտրոնական մասում պատկերված է Հայաստանի Հանրապետության ոստիկանության մետաքսակար զինանշանը՝ 450 մմ բարձրությամբ և 250 մմ լայնությամբ:

7. Հայաստանի Հանրապետության ոստիկանության զինանշանի տակ, պաստառի երկայնքով, ոսկեգույն մետաքսաթելով ասեղնագործված են «ՀԱՆՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ» բառերը, տառերի բարձրությունը 4 մմ է, լայնությունը՝ 3 մմ:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**

<u>Ձև</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՊԱՏԿԵՐԸ

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2020 թ.
մարտի 6-ի N 311-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության զինանշանը (այսուհետ՝ զինանշան) անձանց՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայող (աշխատող) և զինծառայող հանդիսանալու, ինչպես նաև սպառազինության, տեխնիկայի և այլ գույքի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը պատկանելությունը մատնանշող խորհրդանիշ է:

2. Զինանշանը դրվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի աշխատասենյակում, ինչպես նաև պատկերվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության դրոշի (դրոշակի) վրա:

3. Զինանշանի պատկերը զետեղվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կենտրոնական ապարատի վարչությունների և ինքնուրույն բաժինների, կենտրոնական ապարատի անմիջական ենթակայության ստորաբաժանումների, ոստիկանության Երևան քաղաքի, մարզային վարչությունների և դրանց ենթակա ստորաբաժանումների, ոստիկանության ուսումնական հաստատությունների, ինչպես նաև ոստիկանության զորքերի և ենթակա ստորաբաժանումների անկյունադրոշմակների կամ անկյունադրոշմակով դրոշմաթղթերի վրա: Զինանշանի պատկերն օրենքով սահմանված կարգով օգտագործվում է նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների և ոստիկանության զորքերի զինծառայողների համազգեստների տարբերանշանների ու առանձնանշանների, ծառայողական վկայականների, ինչպես նաև անվանական զենքի վրա:

4. Զինանշանի պատկերը կարող է կիրառվել տպագրական, գովազդային-տեղեկատվական և հուշանվերային արտադրանքի (ծրագրեր, օրացույցներ, կրծքանշաններ, ժամացույցներ, թղթապանակներ և այլն), տեսաժապավենների վրա՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ:

5. Զինանշանի պատկերի կիրառման այլ դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի կողմից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**

Հավելված N 4

ՀՀ վարչապետի 2020 թ.
մարտի 6-ի N 311-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության զինանշանը (այսուհետ՝ զինանշան)՝ համաձայն ձևի, բաղկացած է սրից և վահանից (սուրը խորհրդանշում է ուժ և հարկադրանք, իսկ վահանը՝ պաշտպանություն, անվտանգություն):
2. Զինանշանի լայնության և երկարության հարաբերությունն է՝ 1 : 2:
3. Զինանշանի վերին մասում նշած է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ», իսկ ստորին մասում՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:
4. Արույրից պատրաստված վահանի կենտրոնում Հայաստանի Հանրապետության զինանշանն է:
5. Վահանի եզրին կից շրջանակն ունի խորություն, որը լցված է Հայաստանի Հանրապետության դրոշի եռագույն արծնով:
6. Վահանի միջով անցնող սուրը, որը զինանշանի վրա երևում է իր ծայրով և բռնակով, նույնպես պատրաստված է արույրից:
7. Բռնակն ունի 10 ուռուցիկ փաթույթ և վահանի մոտ սահմանափակվում է երկկողմանի երիզով:
8. Զինանշանի հիմնական գույնը ոսկեգույնն է:
9. Արույրից պատրաստված զինանշանը տեղադրվում է բարձր որակի մուգ շագանակագույն փայտե պատվանդանի վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**

<u>Ձև</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ